և այլն։ Մերազինք ասասանօր ամենեքին գրեթէ ի վարձու ունին տուն բնակութեան, յառաջաւորք ոմանք ի ժամանակիս շինեն սեպհական տունս և կալուածս։

Ի մերում ժամանակի յաճախեն յԱզիպտոս Օմիւռնացի մերայինք, և ամենեքին գրեթէ մասնեն ի ծառայութիւն քաղաքական իշխանութեան, ոմանք ի գրագրութիւն դատաստանական տեղեաց յԱրաբացի բարբառ, այլք յայսպիսի պաշտօն վերաբերեալս բդեշխին և նորին քաղաքական կառավարութեանն։ Սակաւք են յաջողակք ի վաճառականութեան. առաւել քան զայս չիք այլ գործք մերազնէից, զի որք են մնացեալ մասն ժողովրդոց՝ են ոմանք որք առնեն լոմայափոխութիւն, են՝ որք արծաթագործք են, այլք ի ծառայութիւնս յառաջաւորաց, սրճարանաց և պանդոկաց դատանին, և սոքա են յաղքատացն կարգի զաւուրն հաղիւ հայթայթեալ պարէն։

Օրերկուս իշխանս ի ժամանակի ունիմք յիշել զԳէորգ Ռափայէլեան Կոստանդնուպօլսեցի և զԿարապետ Տէր Գալստեան Վանեցի. որոց, թող զայլ և այլ բարեպաշտական գործս Աստուածահաճոյս և օգտակարս ազգին, առաջինն շինեաց ի յիշատակ զայժմեան երկյարկեան Առաջնորդարանն, և երկրորդն մեծ ևս բարեպաշտութեամբ կառուցանէր ի մերում ժամանակի զպրոց հոյակապ վասն ազգիս մանկանց լուսաւորութեան։

(Ի յԷջմիածին)

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՅՈՒՅԱԿ (*) ՉԵՌՆԱԴՐԵԼՈՅՆ Ի ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ.

Երդ զկնի օծման իւրոյ Արքազան Վեհըս մեր՝ զորս ձեռնադրեաց, թէ զեպիսկոպոսս, թէ զՊՐՀանայս և թէ զայլ Ընտիրանաւորս, ահա ի ներքոյ ցուցա-

(*) Այս ցուցակը Հայրապետական Թղթոց մէջէն գտնելով՝ արժանը համարեցանք ի հրատարակութիւն։ Այս ցուցակի առաջին երեսուն հետեւեալ ոտանաւոր հատուածքն գրուած էին։

Դ-ա-դ է ---էէ -- Տէր։

«Զինեւ չարիք յաճախեցան, վէրք իմ կրկին նորոգեցան. ոհ անցեալ անցքն ոչ բաւեցան, միրաց վերայ վէրք կուտեցան. միթէ իմ կար միմաց էցէ. զի թշնամին միշտ զիս խոցէ. զիս խոցէ։

Երկին երկնէր և հեծեծէր, վասն իմ խղճայս ցաւ ծնանէր. ոհ. իսկ թշնամին ներանելիթէր. զի հնարիւքն գուն գործէր. միթէ իմ կար վիմ։

Շուրջ զինեւ լարեցոյց ծուվակ. առ ի յառնել յարայատակ. ոհ. տապալել զիս հողոյ քատակ իմ վերայ բանայ դրօշակ. միթէ իմ կար։

Ազատեա զիս ի թշնամոյս ով ամենափրկիչ Յիսուս. ոհ. արդ աչք գերոյս են՝ ի քեզ կոյս զի չարն ոխոյ յոյժ հիքոյս յոյժ հիքոյս. միթէ իմ կար վիմաց։

Ա-ա-ղ-ա-ծ մ-ր-դ-ոյ է դ-դ- է-ր։

Վարանեալ անձն իմ զեգերի. մնաց բանս միոյն հզօրի. սիրով խմով եղէ գերի. աւաղ սէրն իմ. . . ,,։

Իսկ ցուցակին վերնագիրը ըստ այսմ էր։

Ի ՌՄԱՐ ԲՈՒՐՍԱՅ ԵՒ ՅԱՊՐԷԼԷ ԱՀՈՅ ԼՈՒՍՈՒ, Է ՀԻՆԳԵՐՈՐԴԷ ՏԷՐՈՒԹԵՆ ՅԻՆԱՆՑՆ. ՈՐ ԷՐ ԴՈՆ ԵՐԵՄԱՆ ՍԲԲԵՈՅ ԽՈՒՇԷՆ. ՀՈՓԵՈՐ ՀԱՅՐՆ ՄԵՐ ՍԷՄԷՈՆ ՍԲԲԵՊԱՆՆ ՕԾԵՍ ԸՆԴՀԱՆՈՒՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

րըն իւր Եփրեմ ձեռնադրեաց Սարկաւագ:

Իննևտասներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զՏաթևու Առաջնորդ Ղազար վարդապետն և զԿարսեցի Սուքիաս վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, զոր և կարգեաց Առաջնորդ Կարսայ, և զԹամզարայու Առաջնորդ Միքայէլ վարդապետն և զԱգուլեցի Յարութիւն վարդապետն ևս ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս: Նա և զչորեսին բնական միաբանսն սրբոյ Աթոռոյս՝ այս ինքն ըզԳալիթ վարդապետն Թիֆլիզեցի, զՅովսէփ վարդապետն Սանահնեցի, որ էր օրհնածին որդի և աշակերտ իւր, զԳալուստ վարդապետն Աշտարակեցի, որ էր արտաքին գործակալ և վէքիլ սրբոյ Աթոռոյս, և զՓիլիպպոս վարդապետն Անջեցի, որ ևս էր օրհնածին որդի իւր, ի վեցերորդ կիւրակէի յայտնութեան Յիսնակին, որ էր Դեկտեմբերի ԻԵ. որք բարեաւ վայելեսցեն:

Ի ՌՄԻԱ թուոյն մերում:

Քսաներորդ Ղուկիանոս՝ Յովհաննէս՝ Մարտիրոս և Էջմիածնայ գեօղացի Սողոմոն Աբեղայիցն ետ զգաւազան և զիշխանութիւն մասնաւոր վարդապետութեան, ի տօնի սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և յաւուր հինգշաբաթի. որ էր Դեկտեմբերի ԻԷ: Բարեաւ վայելեսցեն:

Քսանևմիերորդ ձեռնադրեաց զսպասաւորսն իւր զՆերսէս, զԵփրեմ և զԽաչատուր Սարկաւագունսն Աբեղայս, ի վեցերորդ կիւրակէին որ զկնի սրբոյ Խաչին և տօնի սրբոց Աւետարանչացն ի ՌՄԻԲ թուոյն երում, որ էր Հոկտեմբերի Ի: Որոց Տէր տացէ վայելել:

Քսանևերկուերորդ ետ զգաւազան և զիշխանութիւն ծայրագոյն վարդապետութեան միաբանիցն սրբոյ Աթոռոյս՝ Եղեգնաձորցի Աբրահամ, Եղվարդցի լուսարար Գրիգոր, Աշտարակեցի գործակալ Գալուստ, Կարբեցի վարժապետ Ստեփաննոս, Յօշականցի գրագիր Եփրեմ, իւրոյ իսկ Վեհապետին Սրբազանի նախապատիւ սպասաւոր և հանդերձապետ Մկրտիչ Քանաքեռցի և Թիֆլիզու Առաջնորդ Յովհաննէս՝ և Սանահնեցի Յովսէփ Եպիսկոպոսացն. ի Յիսնակաց բարեկենդան կիւրակէին՝ որ տասներորդ էր զկնի սրբոյ Խաչին՝ ի Նոյեմբերի ԺԵ:

Քսանևերեքերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս՝ զԹարվիզու Նուիրակ Մեսրոբ, որ ի Նուիրակութենէն նոր էր եկեալ ի սուրբ Աթոռս, զԷջմիածնեցի Պետրոս՝ զոր և կարգեաց Նուիրակ Ռումէլու, զԿարնեցի Յակոբ՝ որ է վէքիլ սրբոյ Աթոռոյս, զորբոյն Թօմայի Առաքելոյ վանից միաբան Մատթէոս, զորբոյն Հռիփսիմէի վանից Առաջնորդ Աւետիս, զգրագիր Մատթէոս, [illegible] զԻսահակ, զՈսեթէոս վարդապետի սպասաւոր՝ Գրիգոր և զիւր իսկ Վեհին Սրբազանի սպասաւոր միւս Իսահակ վարդապետն, ի հինգերորդ կիւրակէի ձմեռան Յիսնակին ի Դեկտեմբերի ԺԵ: Որք բարեաւ վայելեսցեն:

Ի ՌՄԻԳ թուոյն մերում:

Քսանևչորսերորդ Ներսէս, Եփրեմ և Խաչատուր աբեղայիցն ետ զգաւազան և զիշխանութիւն մասնաւոր վարդապետութեան ի Տեառնընդառաջի աւուրն, որ է տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն, որ յամենայնում

նեմք։ Որ ի վարդապետութենէն իւրմէ ոչ զոք էր ձեռնադրեալ, ոչ զքահանայս և ոչ զայլ աստիճանաւորս։

Նախ ձեռնադրեաց զՄովսէս վարդապետն, որ էր ի գործ Նուիրակութեան սրբոյ Երուսաղէմայ ի Կարին՝ ի Մայիսի ԺԴ-ին և ի Հոգեգալստեան կիւրակէին։

Երկրորդ ձեռնադրեաց զիւրս համշիրակ եղբայրն, զմիաբանսն սրբոյ Աթոռոյս զՂուկաս վարդապետն զառաջնորդն Զմիւռնոյ, զԵսայի վարդապետն զՆուիրակն Եւդոկիոյ, զՊետրոս վարդապետն զՆուիրակն Տիգրանակերտու։ Ի Յունիսի ամսոյ ԺԷ օրն երեքշաբաթ ի տօնի որդւոց և թոռանց սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։

Երրորդ ձեռնադրեաց զԵրեմիայ՝ զՄըկրտիչ՝ զՄեսրոպ և զՊօղոս սարկաւագունսն աբեղայս, զՂունկիանոսն և զըՍտեփաննոսն սարկաւագունս, և զՅօհաննէսն ջահընկալ։ Ի Նոյեմբերի Թ, և ի կիւրակէին՝ որ զկնի տօնի սրբոց հրեշտակապետացն, ի ՌՄԺԳ թուականին մերում։

Չորրորդ ձեռնադրեաց զիւրս եպիսկոպոսունս, զՍտեփաննոս վարդապետն՝ զառաջնորդն վանից սրբոյ Առաքելոյն Բարդուղիմէոսի, զԻսահակ վարդապետն զառաջնորդն Թամզարայու, և զԳասպար վարդապետն զառաջնորդն Ընկուշոյ։ Ի Յուլիսի ԺԱ՝ որ էր բարեկենդան կիւրակէն Վարդավառի։

Հինգերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զԱնտօն, զՈսեթէոս, և զՍտեփաննոս վարդապետնն զմիաբանսն սրբոյ Աթոռոյս, և զՈւրհայու առաջնորդ Յօնան վարդապետն։ Ի Դեկտեմբերի ԺԳ, որ էր բարեկենդան կիւրակէն սրբոյն Յակոբայ։

Ի ՌՄԺԴ թուականին մերում։

Վեցերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զԿարնոյ առաջնորդ Բաղտասար վարդապետն, զՀասան-ղալու առաջնորդ Աւետիք վարդապետն և զսրբոյ Աթոռոյս միաբան Սանահնեցի Գրիգոր վարդապետն։ Ի յԱպրիլի Գ և ի կիւրակէ աւուր սրբոյ Զատկին։

Եօթներորդ ետ զծայրագոյն գաւազան Տեղապահ Մկրտիչ վարդապետին՝ և Զաքարիայ վարդապետին, ի Մայիսի Ը և ի կիւրակէի երևման սրբոյ Խաչին։

Ութերորդ ձեռնադրեաց եպիսկոպոս զՅօհան վարդապետն սրբոյ Աթոռոյս միաբան, և զՊաղտասար Վանցի՝ յառաջնորդութիւն Կարմրաւոր վանիցն՝ և ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, որ յառաջ նուիրակեաց զՎան, և այժմ ևս եղև վերստին Նուիրակ նոյնոյ տեղւոյն։ Ի Յունիսի ԻԴ ի հինգերորդ կիւրակէի Եղիական յիսնակին։

Իններորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զՊօղոս, զՍարգիս և զԳրիգոր վարդապետսն զմիաբանսն սրբոյ Աթոռոյս, և զԱրաբկերու առաջնորդ Պետրոս վարդապետն, և զՏիգրանակերտու առաջնորդ Կարապետ վարդապետն և զսրբոյ Երուսաղեմայ միաբան Գաբրիէլ վարդապետն, ի Սեպտեմբերի ԺԲ և յերկրորդում կիւրակէին որ յետ սրբոյ Խաչվերացին։

Տասներորդ ձեռնադրեաց զԿարապետ, զՅովսէփ և զՓիլիպպոս սարկաւագունսն աբեղայս։ Ի Նոյեմբերի ԺԹ։ Ի յիսնակաց բարեկենդան կիւրակէն։

Ի ՌՄԺԶ թուին, ի Փետրվարի ԺԱ-ին, և ի սրբոյն Իսահակայ Հայրապետի կիւրակէին,

Մեծասաներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զմիաբանն սրբոյ Աթոռոյս՝ այս ինքն՝ զԵղվարդեցի լուսարար Գրիգոր վարդապետն, զԿարբեցի Սարգիս վարդապետն, զԱռնձեցի Հնդու նուիրակ Յովսէփ վարդապետն, զԿարբեցի վարժապետ Ստեփան վարդապետն, և զՅաշկանցի գրագիր Երեմիայ վարդապետն, նաև զՍպահանցի Մկրտիչ վարդապետն՝ ընդ նուիրակն սրբոյ Երուսաղէմի։

Երկոտասաներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զՄինաս վարդապետն միաբան սրբոյ Աթոռոյս, և զԱւետիք վարդապետն ի յառաջնորդութիւն սրբոյ վանիցն Խորվիրապայ և ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, և զՍարգիս վարդապետն ի յառաջնորդութիւն Ռաբերդու, ի Յուլիսի ԺԲ-ին և ի Լարդավառի բարեկենդան կիւրակէին։

Ի ՈՄԺԱԼ թուոջն մերում։

Երեքտասաներորդ՝ ձեռնադրեաց Եպիսկոպոս զիս զմեզսաներկ ծառայս իւր զՄկրտիչ վարդապետս, նաև զԳեղու սուրբ Կարապետի Առաջնորդ Յոհան վարդապետն՝ ի վերայ նոյն վանիցն, և զԱստապատեցի Միքայէլ վարդապետն յառաջնորդութիւն նորին գեղջ սրբոյն Ստեփաննոսի նախավկայի վանիցն։ Ի ՈՄԺԱԼ թուոջս, ի Յունիսի ԺԵ, ի չորրորդում կիւրակէի Եղիական յիսնակին։ Որոց տէր տացէ վայելել։

Չորեքտասաներորդ՝ յառաջ քան զայս ի Յունիսի Ը և յիսկրորդում կիւրակէի սոյն յիսնակիս, որ է ծոն սրբոյ Էջմիածնի, եւ զասպիճան մասնաւոր վարդապետութեան օրհնաճին որդւոցն իւրոց՝ Յովսէփ և Փիլիպպոս աբեղայիցն, ի ՈՄԺԱԼ թուոջ մերում։

Հնգետասաներորդ ձեռնադրեաց զըսպասաւորսն իւր զՍտեփաննոս և զԽաչակ սարկաւագունսն աբեղայս ի Սեպտեմբերի ԻԼ, ի ծոնի Վարագայ սուրբ Խաչին։ Որոց տացէ Տէր վայելել։

Ի ՈՄԺԹ թուոջ մերում։

Վեցտասաներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զչորեսին միաբանն սրբոյ Երուսաղէմի՝ ի միաբանութիւն նմին ըստ խնդրոյ նորին Պատրիարք Պօղոս վարդապետին, այս ինքն զԿեսարացի Սարգիս վարդապետն՝ որ էր նուիրակ Եւդոկիոյ, զՅամթեցի Աւետիս վարդապետն՝ որ էր նուիրակ նոյն տեղւոյն, զԵսիրջեանցի Զաքարիա վարդապետն՝ որ էր նուիրակ Կարնոյ և զՀամադանցի Յովհաննէս վարդապետն՝ որ էր նուիրակ Հնդկաց։ Ընդ որոց ձեռնադրեաց և զԲանաքեռցի Յովհաննէս վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս՝ որ նոր էր եկեալ ի Նուիրակութենէն Հաշտարխանու։ Ի բարեկենդանի միջին կիւրակէին՝ որ յետ ծոնի սրբոյն Սահակայ Հայրապետին, ի Փետրվարի Ի։ Որոց Տէր տացէ վայելել։

Ի ՈՄԻ թուոջն մերում։

Եօթնեւտասաներորդ Ստեփաննոս և Խաչակ աբեղայիցն եւ զգաւազան և զիշխանութիւն մասնաւոր վարդապետութեան՝ ի Հոգեգալուստ կիւրակէին, որ էր Մայիսի ԺԵ։

Ութուտասաներորդ ձեռնադրեաց ընդ գրագիր Ղունկիանոս և զիւր սպասաւոր Յովհաննէս՝ և զԼուսարարի Մարտիրոս սարկաւագունսն աբեղայս, ի Գիւտ Խաչի կիւրակէին, ի Հոկտեմբերի ԻԳ։ Որոց Տէր տացէ վայելել։ Ընդ սոցին և զսպասաւո-

ամի միշտ ի փետրվարի ԺԳ-ն կատարի։ Որոց տացէ Տէր վայելել։

Բանևհինգերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զԿեսարացի Մատթէոս վարդապետն՝ ի միաբանութիւն և ի սպասաւորութիւն սրբոյ Կարապետի վանիցն, և ի վանահայրութիւն սրբոյ Դանիէլի վանիցն։ Ընդ նմին և ձեռնադրեաց զՍեբաստացոյ սրբոյ Հրեշտակապետի վանից Առաջնորդ Յովհաննէս վարդապետն, և զԱմասիոյ և զՄարզուանու Առաջնորդ միւս Յովհաննէս վարդապետն՝ յերկրորդ ծաղկազարդի կիւրակէին, որ էր Յունիսի Ա։

Բանևվեցերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զԿարնոյ Նուիրակ Փառակեցի Իսահակ վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, և զսրբոյն Սաղիմայ միաբան Կարբեցի Կարապետ վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանիցն։ Ի վեցերորդ կիւրակէին, որ զկնի սրբոյ Խաչին և տօնի սրբոց Աւետարանչացն, որ էր Հոկտեմբերի ԺԹ։ Որք բարեաւ վայելեսցեն։

Այլ և Թոխաթցի Ղռասունօղլի կոչեցեալ Յարութիւն վարդապետ ոմն՝ ի ՌՄԺԲ թուոջն գնացեալ ի Գեանջայ ի չէք Իսրայելէն Եպիսկոպոս ձեռնադրեցաւ. զոր իմացեալ Սրբազանին ընդ բանիւ արար զնա. և մնաց այնպէս ի յերկար ժամանակս. ապա զղջացեալ դիմեաց ի սուրբ Աթոռս՝ առ ոտս Սրբազանին, բերելով և զաղերսանաց թուղթս վասն իւր առ Սրբազանն ի Պօլսոյ Պատրիարք Գրիգոր վարդապետէն։ Եւ Սրբազանն ներեաց նմա, և զապաշխարանս եդեալ ի վերայ՝ պահեաց զնա մի ժամանակ։ Յետոյ արար զնա առաջնորդ Կարնոյ, և զկնի միոյ տարւոյ եբեր ի սուրբ Աթոռս, և ըստ խնդրոյ Կարնոյ ժողովրդեանն ետ նմա զիշխանութիւն Եպիսկոպոսութեան այսու կերպիւ։ Զի թէպէտ անվաւեր և ապօրինաւոր էր ձեռնադրութիւն նորին՝ որ ի չէք Իսրայէլէն. ըստ այնմ՝ զի ի մերժ վիճակէ էր. բայց որովհետև օծեցեալ էր՝ մանաւանդ զի չէք Իսրայէլն յայնմ ժամանակի յորում ձեռնադրեալ էր զնա՝ դեռ չէր բանադրեցեալ, վասն որոյ ոչ էօծ զնա Սրբազանն կրկին, այլ զգեստաւորեցուցեալ զնա ընդ միւս նորընծայիցն վերջգրեցելոց, ուրոյն ի նոցանէ և նախ քան զպատարագն երեք առաջի մեծի Սեղանոյն. և զփող մի Աւետարան ընթերցեալ ի վերայ նորա, ետ նմա ըստ կարգի ձեռնադրութեան՝ զԹագ, զմատանի, զգաւազան և զԱւետարան ի գիրկն բաց ի յօծմանէ։ Եւ այսպէս զանընդունակ Եպիսկոպոսութիւնն նորին արար ընդունելի, և վերըստին արարեալ Առաջնորդ Կարնոյ՝ դարձոյց անդ։

Ի ՌՄԻԳ թուոջն մերում։

Բանևեօթներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զսրբոյն Սաղիմայ միաբան Հաճընցի Սարգիս վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանիցն, զԹրակիոյ առաջնորդ Յակոբ վարդապետն՝ յառաջնորդութիւն նոյնոյ քաղաքին և համայն վիճակացն նորին, զՇողակաթի առաջնորդ Ստեփաննոս վարդապետն և զՁորագեղու անապատի առաջնորդ Ղազար վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս։ Ի փետրվարի ԺԴ, ի տօնի քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն։

Գասանևութերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զՍանցի Կարապետ վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, և զՀուայ առաջնորդ Խաղտասար վարդապետն՝ յառաջնորդութիւն սրբոյն Կանոնոսի վանիցն, զՋուղայեցի Աւետիք վարդապետն, և զՋուղայեցի Ղուկաս վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս։ Ի Սեպտեմբերի ԻԷ՝ ի տօնի Վարագայ խաչին։

Գասանևիններորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զԱստապատցի Յովհաննէս վարդապետն՝ յառաջնորդութիւն և ի հայրութիւն սրբոյ Կարապետի անապատին՝ որ Կտուց անապատ կոչի, և զԽարբերթու առաջնորդ Իսահակ վարդապետն՝ յառաջնորդութիւն Դատմաց վանք կոչեցեալ սուրբ Աստուածածնի վանիցն։ Ի Նոյեմբերի ԻԲ, յառաջներորդում կիւրակէի Յայտնութեան Յիսնակին։ Որք բարեաւ վայելեսցեն։

Ի ՈՒՄԻՆ Թուոջն մերում։

Երեսներորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զսրբոյ Գէորգեայ վանից առաջնորդ Խարսեղ, և զԹիֆլիզեցի ժամասած Յարութիւն վարդապետն ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, զկնի Հոգւոյ գալստեան հինգերորդ կիւրակէի երեքշաբթի օրն, որ էր Յունիսի ԻԸ։ Որք բարեաւ վայելեսցեն։

Ի ՈՒՄԻՕ Թուոջն մերում։

Երեսունևմիներորդ ձեռնադրեաց զԵրեասուրոյ սուրբ Նշանի վանից առաջնորդ Յակոբ վարդապետն ի յառաջնորդութիւն նոյն վանիցն և քաղաքին ըստ խնդրոյ ժողովրդոց տեղւոյն։ Ի Հոգեգալուստ կիւրակէին՝ որ էր Յունիսի Դ։

Երեսունևերկուերորդ ձեռնադրեաց զԿեսարացի Պետրոս վարդապետն, որ էր վէքիլ Կոստանդնուպօլսոյ Պատրիարքին, ըստ խնդրոյ նոյն Պատրիարք Զաքարիա վարդապետին՝ և իշխանաց նոյնոյ քաղաքին այնու պայմանաւ՝ զի Ճեասցէ ընդ ձեռամբ Պատրիարքին։ Ի յերրորդ կիւրակէին Ամենայն Յիսնակին, որ էր բարեկենդան սուրբ Յակոբայ պահոցն, ի Դեկտեմբերի Ի։

Ի ՈՒՄԻՆ Թուոջն մերում։

Երեսունևերեքերորդ ձեռնադրեաց զԱղմաստցի Ստեփաննոս վարդապետն Եպիսկոպոս ի յառաջնորդութիւն սրբոյն Խարդուղիմէոսի առաքելոյն և նորին վիճակացն, ի յերկրորդում կիւրակէին ըզկնի Հոգւոյ գալստեան, որ է տօն Երկրորդ Միածնի։ Ի Յունիսի Ի։ Որք բարեաւ վայելեսցեն։

Երեսունևչորսերորդ ձեռնադրեաց Եպիսկոպոս զսպասաւորն Զաքարիա Պատրիարքին զԱնահնեցի Յակոբ վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս. նոյնպէս և զՋուղայեցի Գալուստ վարդապետն՝ ի միաբանութիւն սրբոյ Աթոռոյս, և զԱկնցի Կարապետ վարդապետն՝ ի յառաջնորդութիւն Աբրակերու քաղաքին և նորին վիճակացն, ի չորրորդում կիւրակէին զկնի Հոգւոյ գալստեանն, ի գալն մեծ ուղտաւորացն ի Յունիսի ԻԳ։

Ի ՈՒՄԻՐ Թուոջն մերում։

Երեսունևհինգերորդ եւ զգաւազան և զիշխանութիւն Օտայրագոյն Վարդապետութեան՝ Զնաբերթցի Մեսրոբ, Կարնեցի Յակոբ, Առնջեցի Փիլիպպոս, Կաւակերտցի գրագիր Մատթէոս, ի-

րոյ իսկ ինքեան Սրբազանին աշակերտ Գեղամեցի Սահակ և Սանահնեցի Յակոբ վարդապետացն։ Ի Մարտի երեք ի յԵղուհացին, և ի Տեառնի կիւրակէին։ Որոց տացէ Տէր վայելել բարեպէս զաւուրս կարգս իւրեանց։

Աւարտումն եղև սորուն տետրակիս ի ՌՄԼԱ թուոյն ի Սեպտեմբերի ԺԵ, ի վայելս գթառատ Հօրն իմոյ ,,

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՌՈՒՍՔ ԸՆԴ ՊԱՐՍԻԿՍ

Ի ՇՐՋԱԿԱՑՍ ՇՈՒՇԻՈՅ

Արդ յամն Մեծի և Ինքնակալ Կայսերն ամենայն Ռուսաց՝ Աղէքսանդր Պաւղովիչին՝ ի մերումս ժամանակի 1816 ամի Տեառն, եղև պայմանադրութեամբ հաշտութիւն 13 ամաց ի մէջ Ռուսաց և Պարսից։ Իբր թէ՝ տէրութիւնն Պարսից փոքր գոլով՝ հնազանդեսցի հարկս տալով տէրութեանն Ռուսաց. և այն պայմանադրութիւն տևեաց յամս 9 կամ 10 մինչև ի 1826 թիւն։ Արդ՝ յառաջ քան զլրումն պայմանադրութեանն սոցա ժամանակ, վասն բազում յանցանաց մերոց՝ վախճան ընկալեալ փոխեցաւ առ Քրիստոս յիշեալ ամենողորմած Ինքնակալ Կայսրն ամենայն Ռուսաց՝ Աղէքսանդր Պաւղովիչն յամի Տեառն 1825՝ թագաւորեալ յամս 25· որում յաջորդեալ տեղակալեաց Նիկոլայ Պաւղովիչ եղբայր նորա՝ ընդ նորա, և նստաւ յաթոռն Ինքնակալութեան ամենայն Ռուսաց յամի տեառն 1826։ Բայց որպէս աւագ եղբայրըն, նոյնպէս և նորոգ օծեալն մի քան զմի ողորմած և խնամառատք եղեն առ Հայոց ազգս, իսկ ահարկուք առ բոլոր սահմանակից տէրութիւնսն, հաշտ ունելով ընդ իւրեանս զամենայն կործեցեալ թշնամիսըն, խաղաղասէրք, ողորմածք և առատաձեռք, արդարադատք յանցաւորաց և պատժարժան վնասակարաց իւրեանց. մըտախոհք, բարեխորհուրդք, քննիչք կանոնաց, օրինաց և դատաստանաց, ամենեքին զօրացեալք խաչիւն Քրիստոսի, ծաղկեալք հաւատով և պէս պէս առաքինութեամբք։

Արդ՝ յանդորրութեանս այս միջոցի՝ երթ և եկս լինէր միշտ յերկաքանչիւր տէրութենէ առ միմեանս բարեկամաբար. վասն որոյ ի 1826 ամի տեառն՝ Ինքնակալ և Մեծազօր Կայսրն ամենայն Ռուսաց Նիկոլայ Պաւղովիչն դեսպան առաքեաց առ Պարսից տէրութիւնն ի սակս սահմանաց իւրեք, զմեծ ոմն Գ.եներալ Մենշիկով կոչեցեալ, և գրեաց ի ձեռն դեսպանին իւրոյ՝ և ասէ. կամ զգրեալ սահմանսն հանդերձ յանձնառեալ հարկօքն հատուսցէ տալ մեզ տէրութիւնն Պարսից, և կամ թէ ոչ՝ պատրաստեսցի ի պատերազմ. յերկուց աստի յոր և հաճեսցի՝ ընտրեսցէ։

Իսկ ինքն՝ տէրութիւնն Ռուսաց՝ յաղագս պայմանին անհոգացեալ միամտութեամբ, դնէր ի լայնածաւալ սահմանս Տէրութեան իւրոյ զսակաւ սակաւ զօրս անցեալն պահապանս, և սպասէր երկայնմտութեամբ վերադարձման դեսպանին իւրոյ ի Պարսից տէրութենէն։

Իսկ ճշմարտասէր տէրութիւնն Ռուսաց՝ մինչ տակաւին յայսմիկ խորհրդեան էր, ահա նենգժոտ՝ օձաբարոյ՝ չար և անօ-